Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 24-ի N 1421 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈԼՈՐՏԻ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված բնապահպանական ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) նախատեսվող միջոցառումների իրականացման առաջնայնությունների կամ դրանց փոփոխությունների՝ շրջակա միջավայրի ոլորտի և առողջապահության ոլորտի լիազոր մարմինների (այսուհետ՝ լիազոր մարմիններ) հետ համաձայնեցման հարաբերությունները:

2. Համայնքի ղեկավարը միջոցառումների իրականացման առաջնայնությունները մինչև ծրագրի իրականացման տարվան նախորդող տարվա հունիսի 1-ը, իսկ դրանց փոփոխությունները՝ մինչև ծրագրի իրականացման տարվա հոկտեմբերի 31-ը ներկայացնում է լիազոր մարմիններին՝ համաձայնեցման: Նշված ժամկետներից հետո լիազոր մարմինների համաձայնեցմանը ներկայացված միջոցառումների իրականացման առաջնայնությունները կամ դրանց փոփոխությունները լիազոր մարմինների կողմից չեն դիտարկվում և վերադարձվում են համայնքի ղեկավարին:

3. Լիազոր մարմինները միջոցառումների իրականացման առաջնայնությունները կամ դրանց փոփոխությունները ստանալուց հետո 15-օրյա ժամկետում՝

1) տալիս են համաձայնություն (Ձև N 1 կամ Ձև N 2 ձևաչափերին համապատասխան).

2) միջոցառումների իրականացման առաջնայնությունների կամ դրանց փոփոխությունների վերաբերյալ ներկայացնում են տվյալ մարզի կամ համայնքի զարգացման կամ շրջակա միջավայրի պահպանության տեղական գործողությունների ծրագրերից կամ այլ ծրագրային կամ ռազմավարական նշանակության փաստաթղթերից կամ շրջակա միջավայրի կամ առողջապահության ոլորտներում համայնքի առաջնահերթություններից բխող առաջարկություններ.

3) «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում համայնքի ղեկավարին են վերադարձնում միջոցառումների իրականացման առաջնայնությունները կամ դրանց փոփոխությունները:

4. Լիազոր մարմնի կողմից միջոցառումների իրականացման առաջնայնությունների կամ դրանց փոփոխությունների վերաբերյալ սույն կարգի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված ժամկետներում համաձայնություն չտալու, 3-րդ կետով սահմանված ժամկետում առաջարկություններ չներկայացնելու կամ առաջնայնությունները կամ դրանց փոփոխությունները չվերադարձնելու դեպքում դրանք համարվում են լիազոր մարմնի կողմից համաձայնեցված:

5. Համայնքի ղեկավարը սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում ներկայացված առաջարկություններն ստանալուց հետո, դրանք ամբողջությամբ կամ մասնակի ընդունելու դեպքում, 10-օրյա ժամկետում լրամշակում և լիազոր մարմինների համաձայնեցմանն է ներկայացնում միջոցառումների իրականացման առաջնայնությունների կամ դրանց փոփոխությունների լրամշակված տարբերակը: Առաջարկությունները չընդունելու դեպքում համայնքի ղեկավարը 3-օրյա ժամկետում միջոցառումների իրականացման առաջնայնությունները կամ դրանց փոփոխությունները կրկին ներկայացնում է առաջարկություն ներկայացրած լիազոր մարմնի համաձայնեցմանը՝ կցելով պարզաբանում առաջարկությունները

չընդունելու վերաբերյալ, կամ ձեռնպահ է մնում միջոցառումների իրականացման առաջնայնություններ կամ դրանց փոփոխություններ ներկայացնելու նախաձեռնությունից:

6. Համայնքի ղեկավարը սույն կարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքում լիազոր մարմինների համաձայնեցմանն է ներկայացնում նոր միջոցառումների իրականացման առաջնայնություններ կամ դրանց փոփոխություններ, կամ ձեռնպահ է մնում դրանց ներկայացման նախաձեռնությունից: Նոր առաջնայնությունների կամ դրանց փոփոխությունների համաձայնեցումն իրականացվում է սույն կարգին համապատասխան:

Ձև 1

Համաձայնեցված է
_____ նախարար
(լիազոր մարմնի անվանումը)

_____ _____
(ստորագրությունը, անունը, ազգանունը)
_____ _____ 20__ թ.

Հավելված
_____ համայնքի
20__ թվականի
բնապահպանական ծրագրի

_____ ՀԱՄԱՅՆՔԻ 20__ ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

NN ը/կ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (հազ. դրամ)
1.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ	
1.1.		
1.2.		
.....		
2.	ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ	
2.1.		
2.2.		
.....		
ԸՆԴԱՄԵՆԸ՝		

Ձև 2

Համաձայնեցված է
_____ նախարար
(լիազոր մարմնի անվանումը)

_____ _____
(ստորագրություն, անունը, ազգանունը)

_____ _____ 20__ թ.

Փոփոխություն N
_____ համայնքի
20__ թվականի
բնապահպանական ծրագրի

_____ ՀԱՄԱՅՆՔԻ 20__ ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

NN ը/կ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՈՒՄԱՐԸ (հազ. դրամ)
1.	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ	
1.1.		
1.2.		
.....		
2.	ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ	
2.1.		
2.2.		
.....		
ԸՆԴԱՄԵՆԸ՝		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

24.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ